«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Ս.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., դոցենտ Փխրիկյան Ա.Մ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Հայաստանի պետության և իրավունքի պատմություն (1-ին կիսամյակ)

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. Ներածություն

«Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացը «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկի» դիսցիպլին է: «Հայաստանի պետության և իրավունքի պատմությունը» պատկանում է պատմահիրավական գիտությունների շարքին: Այս դասընթացի, ինչպես նաև պատմահիրավական այլ դասընթացների ուսումնասիրության առարկան տվյալ պետության զարգացման պատմական գործընթացներն են, պետական ինստիտուտները և առանձին իրավական երևույթները: Դասընթացը հայոց հին պատմության հիմնական պետական և իրավական ինստիտուտների էվոլյուցիոն ներկայացումն է: Տարբեր պետական-իրավական երեւույթներ դիտարկվում են իրենց պատմական հաջորդականությամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում հայ իրավունքի հուշարձանների ուսումնասիրությանը: Ուսանողները, ուսումնասիրելով առարկան, ձեռք են բերում պետական-իրավական երևույթների նկատմամբ պատմական մոտեցում ձևավորելու, ինչպես նաև ճյուղային իրավաբանական գիտությունների ուսումնասիրությանը նախապատրաստվելու հմտություններ: Հայաստանի պետության և իրավունքի պատմությունն իր բնույթով դասվում է հիմնական կրթական դասընթացների շարքին և Հայաստանում բարձրագույն իրավաբանական կրթության անհրաժեշտ տարր է:

Դասընթացի հիմնական խնդիրներն են.

- Ուսանողների համար բացահայտել Հայաստանում պետության և իրավունքի ձևավորման և զարգացման հիմնական օրինաչափությունները և առանձնահատկությունները:
- Ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ հայկական պետությունների և իրավական համակարգերի ձևավորմանը, դրանց զարգացման օրինաչափությունների վերաբերյա
- Ուսանողներին ծանոթացնել հայկական իրավունքի պատմական հուշարձանների ստեղծման նախադրյալներին և դրանց բովանդակությանը:

Դասընթացի օբյեկտը և առարկան: Դասընթացի ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի պետության և իրավունքի պատմության զարգացումներն են պատմական տարբեր փուլերում:

1.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

- Հայաստանում պետահիրավական երևույթների ծագման և հետագա զարգացման օրինաչափությունները,
- Առանձին պատմական ժամանակաշրջաններում Հայաստանի հասարակական և պետական կարգերի առանձնահատկությունները,

- Առանձին պատմական ժամանակաշրջաններում հայկական իրավունքի հիմնական աղբյուրները

կարողանա՝

- Հիմնավորել իրենց առանձին պատմական ժամանակաշրջանում հայաստանում առկա պետական-իրավական խնդիրների վերաբերյալ,
- Իրավական հարցերի վերաբերյալ տալ մասնագիտական գնահատական.
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնականում.
- Ինքնուրույն կատարելագործել մասնագիտական հմտությունները՝ հաշվի առնելով օրենսդրության, տեսության և պրակտիկայի զարգացումը.

ունակ լինի՝

- Վերլուծել պատմական իրավական ակտերը.
- Առաջադրվող խնդիրների շուրջ բանավեճերի և քննարկումների մասնակացնել, սեփական կարծիքն իրավաբանորեն հիմնավորել.

2.Առարկայական ծրագիրը

Առարկայի նպատակը.

«Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացի հիմնական նպատակն է՝

1. Համակարգային գիտելիքների ձևավորում. Ուսանողներին տրամադրել համակարգված և ամբողջական գիտելիքներ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը հայկական պետականության առաջացման, զարգացման, անկման ու վերականգնման օրինաչափությունների, ինչպես նաև ազգային իրավական համակարգի (ինստիտուտների, աղբյուրների և ճյուղերի) էվոլյուցիայի վերաբերյալ։
2. Ազգային և համաշխարհային համատեքստի զուգադրում. Ցույց տալ հայոց պետաիրավական համակարգի զարգացման առանձնահատկությունները՝ դրանք դիտարկելով համաշխարհային պատմաիրավական գործընթացների և քաղաքակրթական զարգացումների համատեքստում։
3. Մասնագիտական մտածողության զարգացում. Ուսանողների մեջ ձևավորել պատմաիրավական երևույթները վերլուծելու, համադրելու և գնահատելու հմտություններ, որոնք հնարավորություն կտան ավելի խորությամբ ընկալել ժամանակակից պետաիրավական ինստիտուտների էությունը և դրանց պատմական արմատները։

Առարկայի խնդիրները

Նպատակին հասնելու համար դասընթացի շրջանակներում նախատեսվում է լուծել հետևյալ կրթական և գործնական խնդիրները.

Գիտելիքի և իմացության ոլորտում (Ճանաչողական խնդիրներ)՝

- Պատմական փուլերի ուսումնասիրում. Ուսանողներին ծանոթացնել հայկական պետականության զարգացման հիմնական պատմական փուլերին (Հին շրջան, Միջնադար, Նոր և Նորագույն շրջաններ, ներառյալ՝ Հայաստանի երեք Հանրապետությունները)։
- Իրավունքի աղբյուրների վերլուծություն. Ուսումնասիրել հայ իրավական մտքի հուշարձանները և աղբյուրները (սովորութային իրավունք, կանոնական իրավունք, Դավիթ Ալավկաորդու «Կանոնները», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառացը» և այլն)։
- Պետական մարմինների կառուցվածքի յուրացում. Վերլուծել տարբեր դարաշրջանների հայկական պետական կազմավորումների կառավարման համակարգը, թագավորական իշխանության բնույթը, գործակալությունների համակարգը և դատական համակարգի կառուցվածքը։

Կարողությունների և հմտությունների ձևավորման ոլորտում (Գործնական խնդիրներ)՝

- Աղբյուրագիտական վերլուծություն. Զարգացնել պատմական իրավական փաստաթղթերի, օրենսդրական ակտերի և պայմանագրերի հետ աշխատելու, դրանք քննադատորեն վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ։
- Համեմատական վերլուծություն. Ուսանողներին սովորեցնել համեմատել տարբեր դարաշրջանների հայ իրավական ինստիտուտները (օրինակ՝ ամուսնաընտանեկան, քրեական, սեփականության իրավունքը) ինչպես միմյանց, այնպես էլ օտարերկրյա իրավական համակարգերի (հռոմեական, բյուզանդական, կանոնական) հետ։
- Պատճառահետևանքային կապերի բացահայտում. Օգնել ուսանողներին տեսնել պետականության կորստի, թուլացման կամ վերականգնման ներքին և արտաքին գործոնների ու իրավական համակարգի փոփոխությունների միջև առկա պատճառահետևանքային կապերը։

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 3 ակադեմիական կրեդիտ (108 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 34 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 1 կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր

1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**64**
1.1.1. Դասախոսություններ	**32**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**44**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք՝ գնահատականով**

2.3. Առարկայի ծավալը՝ «108» ժամ, կրեդիտ՝ «3» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Ներածություն	**2**	**2**	**0**
Թեմա 1. Պետության և իրավունքի ծագումը Հայաստանում	**8**	**4**	**4**
Թեմա 2. Հայաստանի պետությունն ու իրավունքը հնագույն ժամանակաշրջանում /Երվանդունիների և Արտաշեսյանների կառավարման շրջան/	**12**	**6**	**6**
Թեմա 3. Հայաստանի պետությունն ու իրավունքը Արշակունիների կառավարման շրջանում	**8**	**4**	**4**
Թեմա 4. Հայաստանի պետությունն ու իրավունքը վաղ ավատատիրության ժամանակաշրջանում	**12**	**6**	**6**
Թեմա 5. Հայաստանի պետությունն ու իրավունքը զարգացած ավատատիրության	**10**	**5**	**5**

ժամանակաշրջանում			
Թեմա 6. ԿիլիկյանՀայաստանի Պետությունն ու իրավունքը	**14**	**7**	**7**
Ընդամենը	**64**	**32**	**32**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

ՄՈԴՈՒԼ 1

Թեմա 1. Պետության և իրավունքի ծագումը Հայաստանում

Հնագետները ապացուցել են, որ անհիշելի ժամանակներից Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել մարդկային հասարակությունը և այդ տարածքում հայտնաբերվել են նյութական մշակույթի զարգացման բոլոր փուլերի վերաբերյալ տվյալներ: Մ.թ.ա. 14-12-րդ դարից սկսած Փոքր Ասիայի տարբեր շրջաններում ցեղերի համախմբման գործընթացը արագանում է Ասորեստանի ավթոդական քաղաքականության դեմ նրանց պայքարում: 13-րդ դարում Հայկական լեռնաշխարհի տարածքում ստեղծվել են ցեղային միություններ, դաշինքներ՝ նախ «Ուրուաթրի երկրներ», ապա՝ «Նաիրյան երկրներ» անվան տակ: Մ.թ.ա. 9-րդ դարում հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող բազմաթիվ ցեղերի շարքում ամենազարգացած և ուժեղները անվանում էին «ուրարտու», մինչդեռ իրենք իրենց անվանում էին «Բիա»:

Սույն թեմայի շրջանակներում ուսումնասիրվում է ՈՒրարտու պետության ծագման և զարգացման նախադրյալները, երկրի պետական, հասարակական կարգը և իրավունքի հիմնական աղբյուրները:

Թեմա 2. Հայաստանի պետությունն ու իրավունքը հնագույն ժամանակաշրջանում /Երվանդունիների և Արտաշեսյանների կառավարման շրջան/

Մ.թ.ա. VI դարում ավարտվում է հայ ժողովրդի կազմավորման շրջանը և համահայկական պետությունը գլխավորեց Երվանդունիների արքայատոհմը: Մ.թ.ա. VI-IV դդ. Հայաստանի հասարակական կարգը բնութագրվում է որպես հելենիստական տիպի ստրկատիրական հասարակարգ:

Այս փուլում Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում կարևոր դեր էին խաղում հողային հարաբերությունները:

Արտաշեսյանների արքայատոհմի գահակալության շրջանում (189թ. մ.թ.ա-1թ. մ.թ.) հասարակությունը բնութագրվում է որպես հելլենիստական տիպի, սակայն թույլ զարգացած ստրկատիրական հասարակություն:

Սույն թեմայի շրջանակներում քննարկման առարկա են դառնում այս ժամանակաշրջանի պետական և հասարակական կարգի առանձնահատկությունները, ինչպես նաև իրավունքի հիմնական աղբյուրները:

Թեմա 3. Հայաստանի պետությունն ու իրավունքը Արշակունիների կառավարման շրջանում

Այս ժամանակաշրջանում Հայաստանը մտավ ստրկատիրական հասարակարգի քայքայման փուլ: Ավատատիրական հասարակարգին անցնելու հիմնական նախադրյալը պետական հողերիանցումն էր մասնավոր սեփականատերերի տնօրինման ներքո:

Հայկական արքունիքում կառավարման ողջ ապարատը կազմված էր առանձին գործակալություններից, որոնք էլ օժանդակում էին թագավորին պետության կառավարման գործում: Հայ իրավունքի զարգացման այս փուլը հարուստ չէ մեզ հասած իրավունքի գրավոր աղբյուրներով: Միակ աղբյուրը, որից մենք կարողանում ենք պատկերացում կազմել այդ փուլում գործող իրավունքի մասին դա այդ ժամանակաշրջանի պատմաբանների աշխատություններն են և թագավորների մեզ հասած սակավաթիվ հրամանների և ուղերձների տեքստերն են: Պատմագիտական աղբյուրներից մեզ հայտնի է դառնում, Արշակունիների կառավարման ժամանակաշրջանում, հողի նկատմամբ բացի թագավորական սեփականությունից, զարգացած էր նաև մասնավոր սեփականությունը: Սակայն եթե հողի սեփականատիրոջը մեղադրում են պետական դավաճանության մեջ, թագավորն իրավունքուներ բռնագանձել նրա սեփականությունը հօգուտ որևէ համայնքի:

Սեփականության իրավունքի օբյեկտ էին նաև ստրուկները, որոնց հնարավոր էր վաճառել, նվիրել, սպանել և այլն:

Թեմա 4. Հայաստանի պետությունն ու իրավունքը վաղ ավատատիրության ժամանակաշրջանում

Հայաստանի տնտեսական, սոցիալական և քաղաքական համակարգը վաղավատատիրության շրջանում հայտնի է որպես նախախար համակարգ: Նախարարական համակարգի առանձին տարրեր հայտնվեցին դեռևս մ.թ. 1-ին դարի սկզբին, այսինքն՝ Արշակունիների տիրապետության շրջանում:

Վաղ ավատատիրության շրջանում, ինչպես նախկինում, երկրի բարձրագույն իշխանությունը պատկանում էր թագավորին: Չնայած թագավորը Հայաստանը ներկայացնում էր միջազգային հարաբերություններում, նա իր արտաքին քաղաքական այս գործառույթը, ինչպես նաև օրենսդրական, վարչական և դատական գործառույթներն իրականացնում էր նախարարների և հոգևորականների համաձայնությամբ և մասնակցությամբ:

Այս թեմայի շրջանակներում ուսումնասիրվում են նաև ժամանակաշրջանի կանոնական և աշխարհիկ իրավունքի հիմնական աղբյուրները:

Թեմա 5. Հայաստանի պետությունն ու իրավունքը զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում

Մոտավորապես 9-րդ դարից սկսած, Հայաստանը թևակոխել է զարգացած ավատատիրության շրջան: Շատ մեծ և փոքր ֆեոդալական տներ ամրապնդում են իրենց ժառանգական սեփականության իրավունքը:9-11-րդ դարերում որոշակի վերելք են ապրումարհեստն ու առևտուրը: Այս ժամանակահատվածում

աշխատանքի սոցիալական բաժանումը ավելի խորանում է, և զարգանում է դրամաշրջանառությունը:

10-13-րդ դարերում հայ իրավունքի հուշարձաններ են

ա) Օձնեցու Կանոնագիրք Հայոցը,

բ) Դավիթ Ալավկաորդու կանոնները,

գ) Մխիթար Գոշի Դատաստանագիրքը:

Սույն թեմայի շրջանակներում ուսումնասիրվում և վերլուծվում են վերոհիշյալ իրավունքի հուշարձանների բովանդակությունը:

Թեմա 6. Կիլիկյան Հայաստանի պետությունն ու իրավունքը

Կիլիկիայի բնակչությունը իր էթնիկ կազմով բազմազան էր: Միջնադարում այստեղ ապրում էին հույներ, սիրիացիներ, հրեաներ, իտալացիներ, ֆրանսիացիներ, գերմանացիներ և այլոք: Հայերը այստեղ բնակություն են հաստատել վաղուց, հնարավորէ, նույնիսկ մեր դարաշրջանից առաջ, երբ Կիլիկիայի մի մասը նվաճվեց Տիգրան II- իկողմից:

Կիլիկյան հայկական պետության պետական կարգը վաղ ֆեոդալական միապետություն էր:

Կիլիկիայում գործում էր բավականին բարդ դատական համակարգ: Զուգահեռաբար գործում էին պետական, իշխանական և եկեղեցական դատարանները:

Կիլիկյան Հայաստանում իրավունքի աղբյուրներն էին՝սովորութը, մովսիսական օրենքները, Թալմուդը, ասորա-հռոմեական օրենքները, բյուզանդական օրենքները, Անտիոքի Ասիները, թագավորների կարգադրությունները, պայմանագրերը օտար պետությունների և ընկերությունների հետ, եկեղեցական կանոնները, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերը:

4. Գրականության ցանկ

Հիմնական՝

1. Ա. Ասլանյան, Հայաաստանիպետությանևիրավունքիպատմություն, Երևան, 2010 թ.
2. Է. Պողոսյան, Հայաստանիպետությանևիրավունքիպատմություն, Երևան, 2005 թ.

Լրացուցիչ գրականության ցանկ՝

1. Ռ. Ավագյան, Հայիրավականմտքիգանձարան, հ.1, Երևան, 2001, հ.2, Երևան, 2002 թ.

Ինտերակտիվ կայքեր՝

1. www.arlis.am
2. www.parliament.am:
3. www.concourt.am

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար՝

1. Բիայնիլի-Ուրարտու պետության ձևավորումը
2. Ուրարտուի պետական իշխանության կենտրոնական մարմինները
3. Ուրարտուի իրավունքի աղբյուրները
4. Հայաստանի հասարակական և պետական կարգը Արտաշեսյանների և Արշակյանների իշխանության տարիներին
5. Պետական իշխանության կենտրոնական մարմիններըԱրշակյանների իշխանության ժամանակաշրջանում
6. Հայաստանի հասարակական կարգը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում
7. Պետական իշխանության կենտրոնական մարմինները վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում
8. Դատարանակազմությունը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում
9. Դատավարությունը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում
10. Աշտիշատի ժողովի որոշումները
11. Շահապիվարի ժողովի որոշումները
12. Աղվանաց արքա Վաչագանի Կանոնական սահմանադրությունը
13. Դվինի 554թ., 648, 719թթ. ժողովների որոշումները
14. Պարտավի 768 (771) թ. Ժողովի որոշումները
15. Օտարերկրյան իրավունքի նորմերի ռեցեպցիան միջնադարյան Հայաստանում
16. Հայաստանի հասարակական և պետական կարգը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում
17. Կանոնագիրք Հայոց
18. Դավիթ Ալավկաորդու կանոնները
19. Մխիթար Գոշի դատաստանագիրքը /ընդհանուր բնութագիր/
20. Դատարանակազմությունը և դատավարությունը Հայաստանում զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում
21. Հայաստանի պետական իրավունքը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում /ըստ Մխիթար Գոշի դատաստանագրքի/
22. Հայաստանի քրեական իրավունքը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում /ըստ Մխիթար Գոշի դատաստանագրքի/
23. Հայաստանի քաղաքացիական իրավունքը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում /ըստ Մխիթար Գոշի դատաստանագրքի/
24. Հայաստանի ամուսնա-ընտանեկան իրավունքը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում /ըստ Մխիթար Գոշի դատաստանագրքի/
25. Կիլիկյան Հայաստանի հասարակական կարգը
26. Կիլիկյան Հայաստանի պետական կարգը
27. Կիլիկյան Հայաստանի դատական համակարգը
28. Անտիոքի ասիզները որպես Կիլիկյան Հայաստանի իրավունքի աղբյուր
29. Կիլիկիայի արքաների ակտերը որպես իրավունքի աղբյուր
30. Սմբատ Գունդստաբլի դատաստանագիրքը
31. Կիլիկյան Հայաստանի պետական իրավունքը

32. Կիլիկյան Հայաստանի քաղաքացիական իրավունքը
33. Կիլիկյան Հայաստանի ամուսնաընտանեկան իրավունքը
34. Կիլիկյան Հայաստանի քրեական իրավունքը

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքերի արդյունքում:

6.1 **Գնահատման չափանիշները (Բանավոր քննություն)**

Բանավոր քննության ժամանակ ուսանողի պատասխանը գնահատվում է ըստ հետևյալ **5 հիմնական չափանիշների** (յուրաքանչյուրը՝ համապատասխան կշռով).

1. **Մասնագիտական գիտելիքների խորություն և հստակություն (30%)**
   - Պատմահրավական փաստերի, իրադարձությունների, ժամանակագրության և պետահրավական ինստիտուտների էության ճշգրիտ իմացություն:
   - Իրավական աղբյուրների (օրինակ՝ Կանոնագրքեր, Դատաստանագրքեր) բովանդակության և դրանց կիրառման առանձնահատկությունների իմացություն:
2. **Վերլուծական և համեմատական մտածողություն (25%)**
   - Պատմահրավական երևույթների պատճառահետևանքային կապերը վերլուծելու կարողություն:
   - Տարբեր դարաշրջանների հայ իրավական ինստիտուտների համեմատումը միմյանց կամ օտարերկրյա իրավական համակարգերի հետ:
   - Պատմական փորձը ժամանակակից իրավական զարգացումների հետ կապելու հմտություն:
3. **Մասնագիտական տերմինաբանության տիրապետում և խոսքի կառուցվածք (20%)**
   - Պատմահրավական և ընդհանուր իրավաբանական հասկացությունների ու տերմինների տեղին և ճշգրիտ օգտագործում :

    - Մտքերի տրամաբանական, կուռ և փաստարկված շարադրանք։
4. **Աղբյուրագիտական նյութի հետ աշխատանք (15%)**
    - Հղումներ կատարելու կարողություն կոնկրետ պատմական աղբյուրներին, օրենսդրական հուշարձաններին կամ պատմիչների վկայություններին։
5. **Ինքնուրույն դատողություններ և արձագանք լրացուցիչ հարցերին (10%)**
    - Քննող դասախոսի ուղղորդող կամ հստակեցնող հարցերին արագ, ճկուն և տրամաբանական արձագանքելու կարողություն։
    - Պատմահրավական վիճելի կամ երկակի մեկնաբանություն ունեցող հարցերի վերաբերյալ սեփական դիրքորոշման հիմնավորում։